Արձանագրություն թիվ 2

ՀՀ ՇՄ Արթիկ համայնքում 08. 07. 2021 թ. կայացած հանրային քննարկման

08.07.2021թ. ***ք. Արթիկ***

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2021 թվականի հուլիսի 8-ին ժամը 11:00-ին ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի համայնքապետարանում տեղի ունեցավ Արթիկի հրաբխային տուֆի հանքավայրերի արևելյան՝ 08-002-0251 կադաստրային թաղամասում քարի արդյունահանման նպատակով <<Կլորիկ>> ՍՊԸ-ին վարձակալությամբ տրամադրման նպատակով հանրային քննարկման 2-րդ փուլը:

Հանրային քննարկմանը մասնակցում էին Արթիկի համայնքի ղեկավարի խորհրդական Գ. Փթուկյանը, ավագանու անդամներ <<Կլորիկ>> ՍՊԸ-ի տնօրեն Տ. Պետրոսյանը, Արթիկ համայնքի ավագանու անդամներ՝ Ա. Նիկողոսյանը, Ռ. Վարդանյանը, Արթիկի համայնքապետարանի պատասխանատու բաժնի մասնագետներ, համայնքի բնակիչներ:

Նիստը վարում էր Արթիկ համայնքի ղեկավարի խորհրդական Գ. Փթուկյանը: Նա մասնակիցներին ներկայացրեց հանդիպման օրակարգը. <<Կլորիկ>> ՍՊԸ-ի տնօրենը Արթիկ համայնքի վարչական սահմանում գտնվող հրաբխային տուֆի հանքավայրերի արևելյան թաղամասում գտնվող հանքերում ցանկանում է կազմակերպել տուֆ քարի արդյունահանում: Նա նշեց, որ վերոնշյալ տարածքը մոտ է գտնվում ՀՀՇՄ նախարարության ԲԾԻԳ-ի կողմից <<Արթիկ քաղաքի փակ քարհանքերի և ջրհեղեղների կառավարում>> պիլոտային ծրագրով իրականացվող 40 հա ռեկուլտիվացիոն տարածքին: Նախատեսվող գործունեության համար <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջներով այսօր անցկացվում են հանրային քննարկումների 2-րդ փուլը: Նա խնդրեց մասնակիցներին ակտիվ լինել և բարձրացնել հուզող բոլոր հարցերը:

Ելույթ ունեցան.

1. <<Կլորիկ>> ՍՊԸ-ի բնապահպանական մասնագետ Զարուհի Զուռնաչյանը, ով ներկայացրեց հանրային քննարկման օրակարգը՝ ծրագրի նախնական գնահատման հայտի տեխնիկական առաջադրանքի նախագիծը: Նա ներկայացրեց ծրագրով նախատեսած գործունեությունը. շուրջ 14 հա հանքավայրի տարածքում 20 տարի ժամկետով իրականացնել տուֆ քարի արդյունահանություն՝ տարեկան շուրջ 50 000 խ/մ ծավալով: Նա ներկայացրեց շրջակա միջավայիր վրա՝ նախատեսվող գործունեությամբ ազդեցության մեղմման միջոցառումները: Փոշու արտանետումները քչացնելու համար կազմակերպությունը օգտագործելու է ջրցան մեքենա: Հաշվի առնելով հանգստյան գոտու հարևանությունը հանքավայրի տարածքից՝ օրենքով նախատեսված 50 մետր սանիտարապաշտպանիչ գոտու փոխարեն ընկերությունը կպահմանի 100 մետր հեռավորության: Նաև սանիտարապաշտպան գոտու եզրագծով երկշերտ ծառատունկ է նախատեսված: Նախնական գնահատման հայտը ներկայացվել է ՇՄ փորձաքննության կենտրոն, եղել են թերություններ, որոնք լրամշակվել են և ներկայացվել լիազոր մարմնին:
2. ՇՄԱՓԿ ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Մ. Ավետիսյանը մասնակիցներին ներկայացրեց <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի նախնական գնահատման փորձաքննության առարկան և իրավական հիմքերը: Նա նշեց, որ այս ծրագրով նախատեսվող գործունեությունը Ա կարգի գործունեություն է, և օրենքով սահմանված կարգով այսօր կայանում է հանրային քննարկումներ 2-րդ փուլը:

Մասնակիցների կողմից բարձրացվեցին հետևյալ հարցերը.

1. Արթիկի ավագանու անդամ Ռ. Վարդանյանն ասաց, որ եթե Արթիկի համայնքապետարանը և ավագանու անդամները, ինչպես նաև համայնքի բնակիչները հանրային առաջին լսումներին տվել են իրենց նախնական համաձայնությունը, ապա իմաստ ունի արդյոք դրանից հետո կազմակերպել 4 հանրային լսում: Այս ոլորտում անհրաժեշտ է իրականացնել օրենսդրական փոփոխություններ, քանի որ ավելորդ թղթատարությունն առաջացնում է ներդրողների համար ժամանակի իզուր վատնում և հիասթափություն: Անհրաժեշտ է ընթացակարգը հեշտացնել: Բնապահպանության փորձագետ Զ. Զուռնաչյանը ասաց, որ օրենքի նախագիծ է մշակվում լիցենզիա տալու գործընթացը հեշտացնելու համար:
2. Համայնքի բնակիչ Ա. Ռափյանը հարցրեց, թե օրենքով նախատեսված ընթացակարգով երբ կտրվի <<Կլորիկ>> ՍՊԸ-ին լիցենզիա: Համայնքում և ընդհանրապես հանրապետությունում չանապարհաշինարարական

աշխատանքներ են ընթանում, իսկ տուֆ քարի դիֆիցիտն օրեցօր աճում է, այս համատեքստում հնարավոր չէ արդյոք ավելի արագացնել թույլտվության գործընթացը՝ այդ դեֆիցիտը մեղմելու նպատակով: ՇՄԱՓԿ ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Մ. Ավետիսյանը ներկայացրեց, որ երբ հանրային քննարկման հաշվետվություն է ներկայացվում կենտրոն, օրենքով սահմանված ժամկետը 60 աշխատանքային օր է, դրանից հետո մյուս հանրային քննարկումն է իրականացվում: Ա Ռափյանը հարցրեց, ավելի սեղմ ժամկետներում՝ 15-20 օրում հնարավոր չէ իրականացնել: Մ Ավետիսյանը ներկայացրեց, որ ընթացակարգում այլ կառույցներ էլ են ներգրավված:

3. ՇՄԱՓԿ ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Մ. Ավետիսյանը հարցրեց ընկերության մասնագետին ճանապարհների վերաբերյալ: Զ. Զուռնաչյանը պատասխանեց, որ քանի որ հանքավայրը նախկինում շահագործված է եղել, ճանապարհները նույնպես առկա են:
4. ՇՄԱՓԿ ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Մ. Ավետիսյանի հաջորդ հարցը ջրին էր վերաբերում: Արտադրական հրապարակում խմելու ջուրը և տեխնիկական ջուրը ինչ պայմաններով է մատակարարվելու՝ ի նկատի ունենալով արդյոք հանքարդյունահանման համար օգտագործվող ջուրը համայնքի ջրամատակարարման վրա բացասական ազդեցություն ունենալու է: Զ. Զուռնաչյանը պատասխանեց, որ կողքով անցնում է <<Արթիկ ջուրը>>, իսկ համայնքի համար մատակարարվող խմելու ջուրն առանձին խողովակներով է գալիս:
5. ՇՄԱՓԿ ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Մ. Ավետիսյանի երրորդ հարցը, որը բարձրացրել էր նաև Շիրակի մարզպետարանի կողմից, բնապահպանական ինչ լրացուցիչ միջոցառումներ են իրականացվելու: Բնապահպանության փորձագետ Զ. Զուռնաչյանը նշեց, որ իրենց վերոնշյալ բոլոր միջոցառումներն՝ այն է երկշերտ ծառատունկը սանիտարական գոտու երկայնքով, հավելյալ ջրցան մեքենաների օգտագործումը շոգ և չոր եղանակին՝ դրանք բոլորը հավելյալ բնապահպանական միջոցառումներ են: Եթե Շիրակի մարզպետարանի մասնագետները ունեն կոնկրետ առաջարկներ, ընկերությունը կլսի և կիրականացնի այդ միջոցառումները:
6. Գ. Փթուկյանը հարցրեց, քանի ծառ է տնկվելու այդ գոտում: Զ. Զուռնաչյաը պատասխանեց, որ հստակ թիվ կարող են ասել սանիտարապաշտպանիչ գոտու պարագիծը հաշվելուց հետո: Դա կլինի 3-րդ հանրային քննարկման ժամանակ:

Գ. Փթուկյանը, ամփոփելով հանրային քննարկումների արդյունքները, շնորհակալություն հայտնեց մասնակիցներին ներկա գտնվելու համար, իսկ ծրագրի նախագծող կազմակերպությանը՝ հետագա հաջողություններ:

Արթիկ համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձ՝
հանրային քննարկումների պատասխանատու և վարող՝ _____ Գ. Փթուկյան

Ձեռնարկող՝ <<Կլորիկ >> ՍՊԸ-ի տնօրեն՝ _____ Տ. Պետրոսյան

Արձանագրեց՝ Աթիկի համայնքապետարանի
Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության
և հանրային կապերի բաժնի առաջատար մասնագետ՝ _____ Տ. Չարչյանը

Հանրային քննարկումներին մասնակիցների ցանկը կցվում է արձանագրությանը:

Արթիկի հրաբխային տուֆի հանքավայրերի արևելյան՝ 08-002-0251 կադաստրային թաղամասում քարի արդյունահանման նպատակով <<Կլորիկ>> ՍՊԸ-ին վարձակալությամբ տրամադրման նպատակով հանրային հանրային քննարկումների 2-րդ փուլի մասնակիցների

ՑՈՒՑԱԿ

08.07.2021 թ. Ժամը 11:00-ին **Արթիկի համայնքապետարան**

Հ/Հ	Ֆիզիկական/իրավաբանական անձի անուն ազգանունը	Հեռախոսահամարը	Զբաղվածությունը	Ստորագրությունը
1	[illegible]	093 44 5400	[illegible]	[illegible]
2	[illegible]	093 902101	[illegible]	[illegible]
3	[illegible]	093 020248	[illegible]	[illegible]
4	[illegible]	091312113	[illegible]	[illegible]
5	[illegible]	093-138-018	[illegible]	[illegible]
6	[illegible]	098 989396		[illegible]
7	[illegible]	093809380		[illegible]
8	[illegible]	077 67 3956		[illegible]
9	[illegible]	077-53-13-03		[illegible]
10	[illegible]	096 36 9646		[illegible]
11	[illegible]	077 76 83 24		[illegible]
12	[illegible]	098047037		[illegible]
13	[illegible]	077577763		[illegible]
14	[illegible]	077 82 42 92		[illegible]
15	[illegible]	098 736 766		[illegible]
16	[illegible]	098668909		[illegible]
17	[illegible]	093666455		[illegible]
18	[illegible]	093575474		[illegible]
19	[illegible]	093829833		[illegible]
20	[illegible]	093743839		[illegible]
21	[illegible]	093068062		[illegible]
22	[illegible]	093200350	[illegible]	[illegible]

23	[illegible]			
24	[illegible]	(044)8766 00	[illegible]	
25				
26				
27				
28				
29				
30				
31				
32				
33				
34				
35				
36				
37				
38				
39				
40				
41				
42				
43				
44				
45				
46				
47				